# Մենք ինչպե՞ս կարող ենք պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Պողոսն ավարտեց Թեսաղոնիկեցիներին ուղղված իր առաջին նամակը մի խորհրդով այն մասին, թե Սրբերն ինչպես կարող էին ավելի լավ պատրաստվել Փրկչի Երկրորդ Գալուստին:

Կարդացեք Ա Թուղթ առ Թեսաղոնիկեցիս 5.14-22 հատվածները և տեսեք, թե ինչ գաղափարներ եք ձեռք բերում պատրաստ լինելու մասին: Բաց եղեք եղեք մտքերի համար, թե հատկապես որ ուսմունքները կարող են օգտակար լինել ձեզ համար:

- Այդ ուսմունքներից որո՞նք են հատկապես նշանակալից ձեզ համար: Ինչո՞ւ:

Գտեք մեկ կամ երկու սուրբ գրություն, որոնք կօգնեն ձեզ ավելի լավ հասկանալ ընտրված ուսմունքները: (Կարող եք օգտագործել խաչաձև հղումներ կամ դիմել Սուրբ գրքերի ուղեցույցին):

- Հիսուս Քրիստոսն ինչպես է օգնել կամ ինչպես կօգնի ձեզ պատրաստ լինել Իր Երկրորդ Գալուստին: Ի՞նչ կարող եք սովորել Նրա մասին այս հատվածից:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *How Can We Prepare Ourselves for the Second Coming of Jesus Christ*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.